

## Մրցանակային 2-րդ տեղ

Գայանե Մարտիրոսյան

Ասկերանի շրջանի Սգնեք գյուղի միջնակարգ դպրոց

11-րդ դասարան

### Ինչու են մարդու իրավունքները կարևոր

Ինձ համար կարևոր չէ, թե ում կողմնակից է ուժը, ինձ համար կարևոր է, թե ում կողմնակից է իրավունքը:

Վ. Հյուզո

Յուրաքանչյուր մարդ ծնված օրվանից ունի բնական իրավունքներ, որոնք ընդգրկված են 1948թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված մարդու իրավունքների մասին հռչակագրում: Դա մարդկության պատմության մեջ ամենակարևոր իրադարձություններից է: Այն խորհրդանշում է նոր դարաշրջանի սկիզբը պետության և քաղաքացու փոխհարաբերություններում: Մտածելու տեղիք է տալիս. ինչու՞ մարդկությունը ապրելով երկրի վրա, միայն 20-րդ դարի երկրորդ կեսին սկսեց մարդու իրավունքների համընդհանուր ճանաչման գործընթացը: Մարդու իրավունքների պատմությունը հազարամյակների պատմությունն ունի և իր արտացոլումն է գտել կրոնական, մշակութային, փիլիսոփայական մտքի ու իրավական զարգացումների մեջ: Մի շարք հնագույն փաստաթղթեր տարբեր աշխարհամասերից, իսկ ավելի ուշ կրոններ ու փիլիսոփայություններ արտահայտել են որոշակի հայեցակարգեր, որոնք կարող են համարվել մարդու իրավունքներ: Հին Բաբելոնի Համուրապպի արքայի օրենքների ժողովածուից մինչև Ազգերի Լիգայի մանդատները մարդու իրավունքների հիմնախնդիրը աստիճանաբար զարգացել ու դարձել է հասարակական անհրաժեշտություն: Մարդու իրավունքների մասին դեկլարացիայի հիմքերը դրվել են այնպիսի մտածողների կողմից, ինչպիսիք են Սոկրատեսը, Պլատոնը, Մաքսիավելին: Ընդհանրապես ինչու՞ է մարդուն անհրաժեշտ իմանալ իր իրավունքները, որպեսզի նա հստակ իմանա, թե ինչ կարող է ակնկալել կյանքից: Եթե մարդը չգիտի իր իրավունքները և

պարտականությունները, պատկերացում չի կարող ունենալ, թե ինչ պետք է անի, եթե ստեղծվի դժվար իրավիճակ, նա անպաշտպան կլինի հնարավոր տհաճ իրադարձություններից:

Հին հռոմեական ասացվածքը ասում է. «որտեղ կա իրավունք, այնտեղ կա պաշտպանություն», դրա համար անհրաժեշտ է իմանալ օրենքներն ու իրավունքները, որպեսզի կարողանաս քեզ պաշտպանել, որպեսզի քեզ զգաս վստահ, հետևաբար նաև ազատ: Անհրաժեշտ է իմանալ սեփական իրավունքները, միևնույն ժամանակ չանտեսելով ուրիշինը, որպեսզի վստահ կերտես քո ապագան:

Իմ կարծիքով, եթե բոլոր մարդիկ հարգեն իրենց և ուրիշների իրավունքները, ապա երկրի վրա ավելի քիչ կլինեն անարդարությունը, տխրությունը և վիշտը: Մարդու ամենակարևոր իրավունքն է համարվում կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունքը և այն պետք է լինի արժանապատիվ: Չպետք է ստորացնել մարդուն ո՛չ հոգեպես, ո՛չ էլ ֆիզիկապես:

Մարդու իրավունքները պետք է պաշտպանված լինեն պետության և օրենքների կողմից: Սակայն մարդիկ հաճախ ստիպված են լինում պաշտպանվել հենց պետությունից և նրա ղեկավարներից: 19-րդ դարի կեսերին ու վերջին մարդկությունը դեռևս սկանառես էր այնպիսի երեւոյթների, ինչպիսիք էին՝ ստրկությունը, ճորտատիրությունը, աշխատանքի անտանելի պայմանները եւ չնչին վարձատրությունը, երեխաների աշխատանքը, իսկ Միացյալ Նահանգներում գոյություն ուներ նաև «Հնդկացիների հիմնահարց»: Միայն անկախության հռչակագրից 80 տարի անց Ամերիկյան ներքաշվեց արյունահեղ պատերազմի մեջ, որի արդյունքում վերացվեց ստրկատիրությունը: Միևնույն ժամանակ Ռուսաստանում արգելվեց ճորտատիրությունը: Այսուհանդերձ, ինչպես ամերիկյան սեւամորթ ստրուկները, այնպես էլ Ռուսաստանում ազատություն ստացած ճորտերը դեռևս տասնյակ տարիներ չեն օգտվել մարդու հիմնարար ազատություններից: Եվրոպայում 20-րդ դարում անառողջ կանանց արգտելվում էր երեխա ունենալ հանուն «ազգի մաքրության»: Լավ է, որ այդ ժամանակները անցել են,

մարդկությունը դարձել է գիտակից, սակայն չի կարելի ասել, որ մարդկանց իրավունքները ամբողջովին պաշտպանված են և մեր երկրում նույնպես: Հարուստ և ազդեցիկ քաղաքացիների իրավունքները կարծես թե պաշտպանված են, իսկ հասարակ քաղաքացիներինը՝ ոչ այնքան: Իմ կարծիքով մեզանից յուրաքանչյուրը պետք է հետևի, որ չխախտվեն իր իրավունքները և ազատությունները: Եվ եթե յուրաքանչյուրս պաշտպանենք մեր իրավունքները, ինչպես նաև հարգենք ու չխախտենք ուրիշներինը, միայն այդ դեպքում մեր պետությունը կդառնա իրավական: Մեծ է նաև ժամանակակից սերնդի դերը իրավական պետության կերտման մեջ: Ապրելով 21-րդ դարում և մեր վրա զգալով այն բոլոր իրադարձությունների ազդեցությունը, ինչ ամեն օր տեղի է ունենում մեր շուրջը և ինչը ուղղակի թե անուղղակի ձևով ազդում է մեր կյանքի որակի վրա, անհրաժեշտ է ճանաչել մեր իրավունքները, այո հենց ճանաչել, ոչ թե զուտ իմանալ օրենսդրական ակտերը այս ոլորտի հետ կապված, այլ հենց ճանաչել: Որքան բազմազան հնարավորություններ են մեզ ընձեռում այս դարի նորագույն ու օրեցօր ավելի ու ավելի անհրաժեշտ դարձող տեխնոլոգիաները, այնքան մարդ ավելի ու ավելի խոցելի է դառնում իր իրավունքների խախտման հավանակության հետ կապված: Այն միջավայրում, որտեղ մենք ապրում ենք, որտեղ անցնում է մեր կյանքը, հնարավոր է առնչվել մեր իրավունքների խախտման բազում դեպքերի հետ: Իսկ երբ խախտվում են մեր իրավունքները, երբ մենք չենք կարողանում ինքներս մեզ պաշտպանել ցանկացած տիպի ոտնձգություններից, որ արտաքին աշխարհն է ուղղում մեր դեմ, մենք դառնում ենք խոցելի, մենք չենք կարողանում լիովին ու մեր հնարավորությունների չափ ինտեգրվել հասարակության արժանի անդամների շարքը: 21-րդ դարում, երբ տեղի են ունենում մարդու իրավունքների այնպիսի խախտումներ, որոնք մարդու արժանապատվության զգացումն են վտանգի տակ դնում, անհրաժեշտ է իմանալ մեր իրավունքները: Իրավունքների իմացությունը սակայն բավարար չէ, անհրաժեշտ է ճանաչել աշխարհը, մերօրյա կյանքում հնարավոր վտանգները՝ քողարկված կամ ակնհայտ, որ գալիս են դրսի աշխարհից ու որոնք շատերին են գրավում իրենց հմայքով ու ապագայի գեղեցիկ հույսերով: Անհրաժեշտ է ինտեգրվել մեր շուրջը կատարվող իրադարձություններին, հետևել դրանց, քանի որ անկախ նրանից մենք ուզում ենք հայտնվել դրանց կիզակետում թե ոչ, մենք դրանց զոհը դառնալու վտանգի տակ ենք՝ մեզնից ցանկացած մեկը: Մեր

իրավունքների խախտումները կարող են սկսվել այն բնակավայրից, նույնիսկ այն տնից, որտեղ մենք բնակվում ենք ու դրա սահմաններից էլ դուրս անցնել՝ ընդգրկելով ավելի գլոբալ սահմաններ: Մեր իրավունքների իմացությունը ու դրանց կիրառումը մեր կյանքում մեր կենսական պահանջներից իր կարևորությամբ ոչ մի բանով չի զիջում մյուս պահանջներին, այն անհրաժեշտ պայման է մեր բարեկեցիկ ու որակյալ կյանքի ապահովման համար:

Իմ սերնդի առջև դեռևս ծառայած են բազմաթիվ խնդիրներ, մարդկանց մեջ, հատկապես հայ ժողովրդի մոտ, կան արմատավորված կարծրատիպեր, որոնք էլ շատ հաճախ հիմնական պատճառն են այն բանի, որ մարդիկ չեն պայքարում իրենց խախտված իրավունքների վերականգնման համար: Իրավունքների խախտման հետևանքները հիմնականում գնահատում են նյութական չափորոշիչներով՝ առանց էական նշանակություն տալու բարոյական վնասի փոխհատուցմանը: Իսկ բարոյական վնասը՝ մարդու արժանապատվությանը, ինքնասիրությանը ու պատվի զգացմանը հասցված վնասը, եթե նույնիսկ այն իր մեջ չի կրում նյութական վնասի որևէ տարր, ամենաձանրն է ու հաճախ կարող է ազդել մարդու ողջ կյանքի ընթացքի վրա: Կարծում եմ սա ամենացավոտ հարցն է, նույնիսկ ավելի ցավոտ նրանից, որ մարդ հագնելու նոր շոր չունի կամ ամենալավ կյանքով չի ապրում: Վերջիվերջո մենք ծնվում ենք, որպեսզի վայելենք այս կյանքը և բացարձակապես կապ չունի դու հարուստ ես, թե աղքատ, կարևոր է, որ դու ունենաս սեփական արժանապատվության զգացում, դրա զիտակցում քո ու քո շրջապատի կողմից: Չէ որ մարդիկ շատ հաճախ հենց իրենց իրավունքների ու արժանապատվության զգացումին հասցված վնասի պատճառով են ձգտում ավելիին, ձգտում հարստություն կուտակել, բայց այն ինչ մարդու ներսում է արմատավորվել ու նստվածք տվել, ոչ մի հարստություն բուժել չի կարող: Իսկ հասարակությանը, մեր երկրին պետք են առողջ մարդիկ, առողջ՝ ֆիզիկապես և հոգեպես: